ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԵՎ ԻԻՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան , ե սեպտեմբերի 2, 2022թ.

Սույն համագործակցության հուշագիրը **(այսուհետ՝ Հուշագիր)** կնքվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի **(այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ)** արևելագիտության ինստիտուտի և ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության **(այսուհետ՝ ԻԻՀ)** դեսպանատան մշակույթի կենտրոնի միջև **(այսուհետ՝ Կողմեր):**

Կողմերը կյարևորելով հայ-իրանական փոխհարաբերությունների զարգացումը և դրանց ընդլայնումը, հիմք ընդունելով ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում 2021 թ. հունվարի 13-ին կայացած հանդիպման ժամանակ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Ղազարյանի և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի ղեկավար Սեյյեդ Հոսեյն Թաբաթաբայի միջև ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները՝ համաձայնվեցին՝

1. 2022 թ. Ընթացքում կազմակերպել միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին,
2. ամեն տարի փոխադարձության սկզբունքով իրար տրամադրել ՀՀ-ում և ԻԻՀ-ում արևելագիտությանը վերաբերող հրատարակված գրականության ցանկեր,
3. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը իր հրատարակած գրքերից մեկ օրինակ նվիրում է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնին կամ դեսպանատանը,
4. ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնը ջանքեր է գործադրում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողների համար հնարավորություն ընձեռելու օգտվել ԻԻՀ-ում տպագրվող ամսագրերից,
5. իրականացնել ,Հրաչյա Աճառյանե-ի անվան մրցանակաբաշխություն, որի շրջանակներում ձևավորված հանձնաժողովը երկու տարին մեկ անգամ կսահմանի լավագույն իրանագետ անվանակարգը,
6. նպաստելու իրանական վերլուծական կենտրոնների հետ համագործակցության հուշագրեր ստորագրելու հարցում,

7. իրականացնել համատեղ գիտաժողովներ, վեբինարներ, կլոր սեղան-քննարկումներ:

8. մինչև 2024 թ. իրականացնել միջազգային գիտաժողով հայ-ռուս-իրանական գիտական համագործակցության շրջանակներում,

9. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողների համար հնարավորություն ընձեռել օգտվելու ԻԻՀ արխիվներից, համաձայն միջպետական պայմանագրերի:

10. խրախուսել իրանագիտական թեմայով ատենախոսությունների հաստատմանը,

11. ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնը աջակցելու է ՀՀ ԳԱԱ անվանի գիտնականներին ԻԻՀ ակադեմիայի պատվավոր անդամի կոչմանը ներկայացնելու գործընթացին,

12. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը աջակցելու է ՀՀ ԳԱԱ-ում ԻԻՀ անվանի գիտնականներին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամի կոչմանը ներկայացնելու գործընթացին:

Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ: Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևանում
համապատասխանաբար պարսկական
ամիս, ամսաթիվ ----------:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյան
Ստորագրություն----------

ՀՀ-ում ԻԻՀ Դեսպանատան Մշակույթի կենտրոնի տնօրեն Հոսեյն Թաբաթաբայի

Ստորագրություն _____